Արձանագրություն N 3
ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 հոկտեմբեր 2025թ., ժամը
14:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի Նախագահ՝ Ա.Հովհաննիսյանը
անդամներ՝ Ս.Գասպարյանը, Լ.Սարգսյանը
քարտուղար՝ Ս.Մկրտչյանը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ա.Հովհաննիսյան)

1.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մեկ աշխատանքային օրով կասեցված նիստում /Արձանագրություն N 2/ առաջարկվել էր բոլոր մասնակիցներին շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել բացակայող փաստաթղթերը:

1.2 Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը, դրանց ոչ ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրեց, որ

ա/ «Ջի Էլ Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

բ/ «Արտ Օֆ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

գ/ «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

դ/ «Բի Էլ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են:

Ներկայացված փաստաթղթերում բացակայում են.

- Նմանատիպ աշխատանքների պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունների, հաշիվ ապրանքագրերի պատճենները
- Նմանատիպ աշխատանքների պայմանագրերն անավարտ են:
- Տարբեր ընկերությունների կողմից փոխանցված հաշիվ ապրանքագրերից ոչ մեկը չունեն պայմանագրեր:

1.3 Հանձնաժողովը որոշեց.

ա/ «Ջի Էլ Թի» ՍՊԸ-ի, «Արտ Օֆ Շին» ՍՊԸ-ի, «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը գնահատել բավարար:

բ/ «Բի Էլ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել անբավարար և մերժել:

գ/ «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա.Հովհաննիսյան)

2"1 Ընտրված մասնակից ճանաչել ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

2.2 Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակից ճանաչել «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ին և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ա.Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Ս.Գասպարյան

_____ Լ.Սարգսյան

քարտուղար՝ _____ Ս.Մկրտչյան